

# ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆԱՊԱՏԿԵՐՆ Է. ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ ՓՈՔՐ ԱՐՉԱԿՈՒՄ

Սոսի Խանիկյան  
*Երևանի պետական համալսարան*

**Բ**նությունն է. Հեմինգուեյի փոքր արձակի տիրապետող թեմաներից է: Հոդվածում ընդհանրական ձևով քննարկվում է բնության ազդեցությունը գրողի ստեղծագործության վրա և դրա ընկալումը քննադատների կողմից: Ներկայացվում է նաև, թե ինչպես է գրողը կառուցում բնապատկերները, ինչպես է գունավորում դրանք, և խորհրդանշական ինչ իմաստներ են ստանում բնության երևույթները Հեմինգուեյի արձակում:

**Բանալի բառեր.** փոքր արձակ, բնապատկեր, խորհրդանիշ, բնատեսարան:

## **Ներածություն**

Հոդվածի նպատակն է ամփոփ կերպով ցույց տալ, թե Էռնեստ Հեմինգուեյի արձակում ինչ կերպ են պատկերվում բնությունը, բնական երևույթները, բնապատկերները: Որսորդության, ձկնորսության, կենդանիների նկարագրության կողքին Հեմինգուեյի արձակում իր ուրույն տեղն է գրավում բնության թեման: Նրան վստահաբար կարելի է դասել այն գրողների թվին, որոնք իրենց ստեղծագործական ուղու ընթացքում պարբերաբար անդրադարձել են բնության թեմային:

Մարդկային հարաբերություններ, հոգեվիճակներ, պատերազմի հետևանքներ ու դրանց հաղթահարում. այս ամենը հաճախ գրողի պատմվածքներում արտահայտվում է բնության պատկերներ նկարագրելու ընթացքում: Հեմինգուեյյան հերոսների և բնության կապն ակնհայտ է:

Բնության, բնական երևույթների, արհավիրքների, բնապատկերների նկարագրությունները հաճախ են հանդիպում Էռնեստ Հեմինգուեյի արձակում. խոշոր վեպերից մինչև կարճ պատմվածքներ լի են բնության պատկերներով: Դրանք կարծես հակադրվում են դաժանությամբ, պատերազմով, բռնությամբ լի աշխարհին և հուշում, որ մարդկության փրկությունը վերադարձն է դեպի բնություն:

## **Բնությունը և բնության երևույթների խորհրդանշական երանգները Հեմինգուեյի արձակում**

Ք. Յուկերտը գրում է, որ Հեմինգուեյը բնություն է վերադառնում կյանքից բավարարություն ստանալու միտումով (Zuckert 2010:21): Հենց դրա համար նրա հերոսները բնությանը դիմում են այն պահին, երբ հոգեպես ճնշված են լինում և ցանկություն են ունենում նորից կյանքի վերադառնալու: Հեմինգուեյի

հերոսները սիրում են բնությունը և իրենց փրկությունը տեսնում են նրա մեջ: Այս միտքը հատկապես վառ է ընդգծված Նիք Ադամսի կերպարում:

Ս. Բիգելը գրում է, որ Հեմինգուեյը մեղք էր համարում բնությունն արակա-  
նացնելը և նրան՝ որպես թշնամու կամ հակառակորդի վերաբերվելը: (Beegel  
2005:194): Հեմինգուեյի այս խոսքերի լավագույն ապացույցը «Ծերունին և ծո-  
վը» պատմվածքի գլխավոր հերոսն է՝ Սանտյագոն: Նրա կերպարում լավա-  
գույնն է արտացոլվում բնություն-մարդ ազնիվ պայքարը: Մի փոքր այլ է հե-  
ղինակի կարճ պատմվածքների կողային հերոս Նիք Ադամսի հարաբերությու-  
նը բնության հետ: Այս պարագայում արդեն հեմինգուեյյան հերոսն էլ, հեղի-  
նակի պես, բնությունն ընկալում է որպես մեծագույն բարեկամ, որպես ապա-  
քինող և հավերժական հզոր ուժ, իսկ բնության խորհրդանիշները դառնում են  
այդ հերոսների ապրումների, հույզերի, հոգեվիճակների բացահայտման բա-  
նալին: Ն.Գ. Մեշրամը պնդում է, որ Հեմինգուեյի կողմից բնության խորհրդա-  
նիշների օգտագործումն ակներև է հատկապես նրա պատմվածքներում  
(Meshram 2002:108): Սա գրականագետի կարծիքն է, մինչդեռ Հեմինգուեյը  
բոլորովին այլ կարծիք ուներ արձակում իր կողմից խորհրդանիշների օգտա-  
գործման մասին: .Ոչ մի սիմվոլիզմ էլ գոյություն չունի: Ծովը ծով է: Ծերունին  
ծերունի է: Տղան տղա է, և ձուկն էլ՝ ձուկ: Ծնածուկը նույնն է, ինչ սյուս շնաձկ-  
ները, ոչ ավելի լավը, ոչ էլ՝ վատը: Բոլոր խորհրդանիշները, որոնց մասին  
մարդիկ խոսում են, աղբ է: Եթե դու գիտես, թե ինչ ես ուզում, ապա քո առջև  
միայն այն է, ինչ դու ինքդ ես ուզում տեսնել: Այսպիսին էր Էռնեստ Հե-  
մինգուեյի կարծիքն իր արձակում խորհրդանիշների առկայության մասի  
(<<http://www.gs.cidsnet.de/englisch-online/Leistungskurs2/hemingway6.htm>>):

Սակայն դժվար է չնկատել խորհրդանշային իմաստներ ու պատկերներ Հե-  
մինգուեյի ռեալիստական արձակում: Դրանք շատ հաճախ լինում են բնութ-  
յան, կենդանիների, թռչունների, եղանակի տեսքով: Այս համատեքստում տե-  
ղին է մեջ բերել Կ. Բեյքերի խոսքերը. .Խորհրդանիշների մեծ մասը ծնվում է  
նրա երևակայությունից, տեսանելի, նյութական տիեզերքից՝ լեռներ և տա-  
փաստաններ, գետեր և ծառեր, եղանակային պայմաններ և տարվա եղանակ-  
ներ, հող և ծով: Բնության այդ պատկերներին Հեմինգուեյը գունավորում է  
տալիս սեփական գեղագիտական ընկալման հզոր, զգացմունքային ուժի  
շնորհիվ (Baker 1972:290): Լիովին համաձայնելով Կ. Բեյքերի հետ՝ ուզում  
ենք հավելել, որ նույնիսկ այն դեպքում, երբ Հեմինգուեյն օգտագործում է  
բնության երևույթի մի ընդհանուր խորհրդանիշ, որը, թվում է, ունի հաստա-  
տուն նշանակություն արվեստում, նա այդ խորհրդանիշին յուրատեսակ  
պատկերացումներ ու իմաստ է վերագրում:

Նրա արձակի գերակշռող թեմաները՝ պատերազմը, տղամարդկությունը,  
կյանքը և մահը, հաճախ արտացոլվում և ներկայացվում են հենց բնության,  
բնության երևույթների միջոցով: Հեմինգուեյի յուրաքանչյուր թեմա պատկա-  
նում է առարկաների խմբի, որոնք խորհրդանիշային իմաստ են կրում և շատ  
հաճախ օգտագործվում են յուրօրինակ մասնավոր, հեմինգուեյական ընկալ-

մամբ: Պատահում է նաև, որ տարբեր պատմվածքներում միևնույն թեման, երևույթը կամ իրավիճակն արտացոլվում են տարբեր խորհրդանիշների միջոցով: Օրինակ, «Կիլիմանջարոյի ձյունը» պատմվածքում մահվան խորհրդանիշ են դառնում կենդանիները, իսկ «Հնդկացիական ճամբարը» պատմվածքում՝ բնությունն ու գույները:

Պատերազմը, հետպատերազմական կյանքը ևս արտահայտվում են շատ տարբեր խորհրդանիշների միջոցով: Բնությունն առկա է պատերազմի մասին գրեթե բոլոր տեսարաններում, իսկ բնության տեսարանները նկարագրելիս հաճախ զգում ենք պատերազմի շունչը, և երբեմն բնությունն ու պատերազմը խորհրդանշորեն կապված են իրար: «Մեծ երկսիրտ գետը» պատմվածքում թերևս ամենից ծավալուն անդրադարձն է արվում բնությանը: Պատմվածքի երկու մասում էլ չկան գործող անձինք, ամբողջ նյութը միայն բնության նկարագրություններ են, և Նիքն է, որ հետևում է այդ ամենին: Այստեղ պարզապես նկարագրություններ չեն, այս պատմվածքն ամբողջությամբ, սկզբից մինչև վերջ բնությունն է պատկերում: Պատմվածքը բաղկացած է երկու մասից և առաջին անգամ լույս է տեսել 1925 թվականին: Գլխավոր հերոսը Նիքն է, սակայն բնությունը պատմվածքում ավելի կարևոր, առանցքային տեղ է զբաղեցնում: Պատմվածքի ամեն մի հատվածը նկարագրվում և պատկերվում է որպես մի առանձին բնանկար: Պատերազմից վերադարձած հերոսը հայրենի տուն է գալիս՝ ամբողջ ճանապարհին անցնելով բնության միջով, կարծես թե նա ուզում է բնության միջոցով վերադառնալ դեպի կյանք:

Այս պատմվածքը գրելիս Հեմինգուեյն ազդվել է պոստիմպրեսիոնիստ գեղանկարիչ Սեզանից: 1924-ին Գերթրուդ Ստեյնին գրված նամակում Հեմինգուեյը նշում է . «Ես ավարտեցի երկու մեծ պատմվածք... և ավարտեցի այն ամենաերկար պատմվածքը, որն սկսել էի Իսպանիա մեկնելուցս առաջ: Ես փորձում եմ ստանալ Սեզանին բնորոշ պատկերներ» (Knight 1995:123): Սեզանի և Հեմինգուեյի բնատեսարանների զուգահեռների մասին մենք կխոսենք ստորև: Ամբողջ պատմվածքը, կարծես, տարբեր կտավներից բաղկացած հավաքածու լինի:

### **Հեմինգուեյ - բնություն կապի քննադատական ընկալումը**

Իրականում Հեմինգուեյ-բնություն կապը միանշանակ չի ընկալվել: Մինչ ոմանք կարծում էին, որ իր ստեղծագործություններում այդքան շատ անդրադառնալով բնությանը՝ Հեմինգուեյը մեծ օգուտ է տալիս աշխարհին, մարդկությանը հիշեցնելով, որ վերադառնալով բնություն՝ նրանք կփրկեն այն, կենդանիների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները շտապեցին քննադատել գրողին՝ Հեմինգուեյին մեղադրելով կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունք ցուցաբերելու և այդ ամենը նաև թղթին հանձնելու մեջ: Գրողը հիանալի որսորդ էր և ձկնորս և իր ստեղծագործություններում մեկ անգամ չէ, որ անդրադարձել է որսորդության և ձկնորսության թեմային: Կենդա-

նինների պաշտպանները կարծում էին, որ այդ ստեղծագործությունները դրդում են մարդկանց ավելի շատ զբաղվել որսորդությամբ և դրանով իսկ մեծ վնաս են հասցնում բնությանը: Ըստ նրանց՝ Հեմինգուեյի գրականությունը դառնում է բնության հանդեպ դաժան վերաբերմունքի քարոզչություն: Որոշ քննադատներ կարծում էին, որ «կենդանի սպանող» գրողի ստեղծագործությունները չեն կարող սեր ներշնչել բնության հանդեպ: Քննադատությունները մինչև անգամ հասնում էին վիրավորանքների: Գ. Լավն իր «Հեմինգուեյի հնդկական առաքինությունները. էկոլոգիական վերանայում» ակնարկում նշում է, որ չնայած Հեմինգուեյի կենդանասեր երևալու փորձերին, իրականում նա ագրեսիվ և մեկուսացած անհատականություն է, որը գործում է ի վնաս բնության, փչացնում բնության այն երևույթները, որոնք, իր պնդմամբ, ինքը սիրում է (Maier 2006:119-122): Այստեղ մենք կրկին առնչվում ենք այն խնդրին, որ գրողի անձնական կյանքը շփոթում են գրականի հետ: Իհարկե, հարկ է նշել, որ բոլոր հեմինգուեյագետները (Բեյքեր, Մայեր, Ռեյնոլդս) միաձայն կարծում են, որ Հեմինգուեյ-բնություն կապն այնքան ուժեղ է, որ արտագույվել է նաև նրա ստեղծագործություններում:

### **Բնապատկերի ստեղծումն ու գունավորումը**

Բնապատկեր ստեղծելիս Հեմինգուեյը փորձում է հնարավորինս մոտ մնալ իրականությանը, նկարագրում է բնությունն այնպիսին, ինչպիսին այն կա: Հեմինգուեյը շատ էր սիրում պոստիմպրեսիոնիստներին, հատկապես՝ Սեզանին: Ընդ որում՝ նման են ոչ միայն Հեմինգուեյի և Սեզանի գույները, այլ նաև պատկերման ոճերը: Սեզանի ոճին բնորոշ է այն, որ նա ավելի քիչ է կենտրոնանում հիմնական ֆոնի մանրամասների վրա՝ առջևում թողնելով բուն պատկերը: Այդպես է նաև Հեմինգուեյի «Մեծ երկսիրտ գետը» պատմվածքում. ձկնորսության մանրամասները նկարագրված են շատ ծավալուն, իսկ բնատեսարանները, մասնավորապես՝ ճահճի տեսարանը, որ նկարագրված է հպանցիկ ձևով: Պատահական չէ, որ 1949 թ-ի հարցազրույցներից մեկում գրողն ասում է. «Վաղ շրջանի նկարիչներից իմ նկարիչը Սեզանն է: Ես կարող եմ պարոն Փոլ Սեզանի պես բնատեսարան ստեղծել: Ես Սեզանից սովորել եմ բնատեսարաններ ստեղծել՝ հազար անգամ շրջելով Լյուքսեմբուրգի թանգարանում» (Berman 2010:52): Նկարիչ Սեզանի և գրող Հեմինգուեյի ընտրած գույներում նույնպես նմանություններ կան, դրանք ոչ թե վառ, այլ խավոտ երանգներ ունեն:

Ե՛վ Հեմինգուեյը, և՛ Սեզանը փորձում են ներկայացնել իրականությունն այնպես, որ ցանկացած ընթերցող կամ դիտող անմիջապես ճանաչի այդ բնատեսարանը: Այսինքն՝ նրանք փորձում են հնարավորինս հարազատ մնալ բնապատկերին, հնարավորինս ճշմարտացի նկարագրել այն: Այդ պատճառով նրանք չեն կենտրոնանում բնության դետալային, ռեալիստական նկարագրության վրա, այլ փորձում են ստեղծել զգացմունքների իրատեսական

պատկերը: Նրանք հաղորդում են այն իրական զգացումները, որ ունենում են ստեղծողը և ընթերցողը բնությանն առնչվելիս:

Ռ. Միտչելի, Համատեղ փոխըմբռնումներ. Ֆրանսիան և Բրիտանիան 19-րդ դարի վերջում գրքում խոսվում է այն մասին, որ «Մեծ երկսիրտ գետը» պատմվածքը խոր ուսումնասիրելիս երևում է, թե Հեմինգուեյի ստեղծագործությունների վրա ինչ ազդեցություն է թողել Սեզանի կտավների ուսումնասիրությունը, ինչպես է այդ ազդեցությունը Հեմինգուեյին հեռացրել «լուսանկարչական ռեալիզմից», որտեղ նշանակություն չունեցող տարրերն անգամ ներառվում են նկարագրության մեջ, տանելով դեպի ավելի պարզեցված և միևնույն ժամանակ՝ ավելի իմաստալից նկարագրության (Mitchell 2013:200): Իսկապես, թեև պատմվածքն ամբողջությամբ բնության մասին է, սակայն գրողն ավելի երկար կանգ է առնում կոնկրետ գործողությունների նկարագրությունների վրա: Օրինակ՝ Նիքի վրան կառուցելը, խարույկ սարքելը, ձուկ որսալը, անգամ ծխախոտ ծխելը նկարագրվում են մանրամասնությամբ, իսկ բնության տեսարաններին անդրադարձ է կատարվում այդ գործողությունների նկարագրության ընթացքում: Բնության նկարագրությունները կարծես ավելի շատ հենքային բնույթ են կրում, և կարող է թվալ, թե դրանք պատմվածքում երկրորդական նշանակություն ունեն: Սակայն Հեմինգուեյի դեպքում ամեն ինչ այլ է: Գործում է այսբերգի տեսությունը, որտեղ բացի բացահայտ իմաստից, կա նաև թաքնված իմաստ, որի մասին չի խոսվում, կամ որը մնում է հետին պլանում: Եվ ընթերցողն ինքնուրույն պետք է հասկանա, թե որն է առաջնային նկարագրությունների հետևում թաքնված իրական իմաստը: «Մեծ երկսիրտ գետը» պատմվածքի հեմինգուեյյան հերոսը կարծես թե տեսնում է այն, ինչ պատկերված է Սեզանի նկարներում՝ համալիր, ամբողջական առաջնային պլան և պարզեցված հետին պլան: Պատմվածքի խորհրդանիշները պատկերվում են հիմնականում հետին պլանում:

Լ.Ա. Ռոմանչուկն իր «Բնությունը Հեմինգուեյի վաղ պատմվածքներում» հոդվածում նշում է. «Ոչ միայն պարզապես բնությունը, այլ նաև մարդու և բնության միասնության, բնության հավերժության և մարդկային կյանքի անցողիկության թեման է ի հայտ գալիս Հեմինգուեյի ամբողջ ստեղծագործական ուղու ընթացքում» (Романчук): Բնության արգելքների, արհավիրքների հաղթահարումը հաճախ դառնում են ինքնահաստատման պայման նաև հերոսների համար: Գեղեցիկ կամ ամառի տեսարանների նկարագրությամբ մենք կարողանում ենք հոգեմիճակներ պարզել: Հաճախ, երբ Հեմինգուեյը կիրառում է «այսբերգի համակարգը», դրանք դառնում են հուշումներ պատմվածքի ենթատեքստը և անգամ՝ բուն իմաստը կռահելու համար: Նոբելյան մրցանակի արժանացած «Ծերունին և ծովը» պատմվածքում գլխավոր հերոս Սանտյագոյից բացի, կարծես հերոս է դառնում նաև ծովը: Երբեմն հանգիստ ու խաղաղ, երբեմն բռնկուն և ահեղ, ինչպիսին և կյանքն է իրականում: Հետևելով բնության պատկերների զարգացմանը Հեմինգուեյի արձակում՝ Բ. Գրիբանովը գրում է, որ բնության փրկող և հավերժական ուժի պատկերներն առկա են Նիք Ադամ-

սի մասին պատմող գրեթե բոլոր պատմվածքներում: Ըստ նրա՝ «Երբ ծագում է արևը» վեպում բնությունն արդեն հասնում է խորհրդանիշի մասշտաբների, և ինչպես Հեմինգուեյն է իր նամակներից մեկում գրել, բնությունը մնում է «հավերժ՝ ինչպես հերոսը» (Грибанов 1988:8):

Հնարավոր չէ չհամաձայնվել Բ. Գրիբանովի հետ: Բնությունն իր ազդեցությամբ ուղեկցում է Նիքին բոլոր պատմվածքներում՝ վաղ մանկությունից մինչև պատերազմական տարիներ և հետպատերազմյան շրջան:

Շատ են նաև բնության նկարագրությունները Նիք Ադամսի մասին գրված պատմվածքներում: Այստեղ մենք տեսնում ենք մարդ-բնություն փոխհարաբերություններ, բնությունը պատկերվում է նաև խորհրդանիշների տեսքով: Երեխա Նիքի և բնության առաջին կապը մենք տեսնում ենք «Հնդկացիների ավանը» (1924) պատմվածքում, որտեղ բնության անվերջության ֆոնի վրա Նիքն առաջին անգամ բախվում է կյանքի և մահվան խնդրին, սկզբին և վերջին: Եվ հենց այդ ֆոնի վրա ենք մենք տեսնում, թե ինչպես է աստիճանաբար ձևավորվում Նիքի ներաշխարհը, ինչ հոգեվիճակներում է հայտնվում նա, և ինչ զգացմունքային անցումներ է ունենում: Նիքի հետ կատարվող հոգեվիճակային փոփոխությունները երևում են պատմվածքում առկա բնության տեսարանների ներկայացման հետ: Բնությունն առկա է նաև պատերազմի մասին տեսարաններում, և երբեմն բնությունն ու պատերազմը խորհրդանշորեն կապված են իրար:

Բնությունը նկարագրելիս Հեմինգուեյը գուսպ է որոշիչների ընտրության հարցում: Բնապատկերի գունավորման հարցում անգամ հեմինգուեյյան գույները վառ ու ճշացող չեն: Նա երբեք ուղիղ տեքստով չի նկարագարում բնության գեղեցկությունը, հզորությունն ու կարևորությունը: Ընթերցողը դա տեսնում և հասկանում է պատմվածքի բովանդակությունից, հերոսների գործողություններից:

### **Եզրակացություն**

Բնությունը գրողի պատմվածքների անբաժան և կարևոր բաղադրիչն է: Որոշ պատմվածքներում բնապատկերը դառնում է պատմվածքի բովանդակային ֆոնը, մյուսներում էլ բնությունը դառնում է պատմվածքի գլխավոր թեման: Ինչպես ասվում է Կ. Բեքնելի և Հ. Բլումի գրքում, Հեմինգուեյի՝ խորհրդանիշների ստույգ և տեղին օգտագործումը նրան հնարավորություն է տալիս բարդ թեմաների մասին գրելիս պարզ շարադրելու իր արձակը (Becnel, Bloom 2008:51): Բնության ֆոնի վրա, բնության հավերժականությանը զուգահեռ պատկերվում է մարդկային կյանքը՝ իր ձեռքբերումներով, հարվածներով, պարտություններով ու հաղթանակներով, և այդ ամենի ազդեցությունը մարդու ներաշխարհի վրա: Հեմինգուեյի հերոսը վերադառնում է բնություն՝ կյանքի, քաղաքակրթության, պատերազմի, անձնական բոլոր դժվարությունները հաղթահարելու և վերածնվելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Baker, C. (1972) *Hemingway, the Writer as Artist*. USA: Princeton University Press.
2. Becnel, K.; Bloom, H. (2008) *Bloom's How to Write about Ernest Hemingway*. USA: Chelsea House, Infobase Publishing.
3. Beegel, S. F. (2005) *Gendering La Mar in the Old Man and the Sea*, 1<sup>st</sup> edition. // Ernest Hemingway. / Ed. B. Harold. USA: Chelsea House Publications.
4. Berman, R. (2010) *Translating Modernism: Fitzgerald and Hemingway*. USA: University of Alabama Press, Sep 23, p. 52.
5. Department of English at Gymnasium Steglitz, *The Old Man and the Sea by Ernest Hemingway*. Available at: <<http://www.gs.cidsnet.de/englischonline/Leistungskurs2/hemingway6.htm>> [Accessed April 2015].
6. Knight, Ch. *The Patient Particulars: American Modernism and the Technique of Originality*. USA: Bucknell University Press.
7. Maier, K. (2006) *Hemingway's Hunting: An Ecological Reconsideration*, Vol. 25(2). The Hemingway Review. USA: The University of Idaho Press.
8. Meshram, N.G. (2002) *The Fiction of Ernest Hemingway*. Delhi: Atlantic Publishers & Distributors.
9. Mitchell, R. (2013) *Mutual (In) Comprehensions: France and Britain in the Long Nineteenth Century*. UK: Cambridge Scholars Publishing.
10. Zuckert, C. (2010) *Hemingway on Being in Our Time*. // Hemingway on Politics and Rebellion. / Ed. by L. C. Frederking. UK: Routledge.
11. Грибанов, Б. (1988) *Человека победить нельзя*. // Фиеста. Прощай, оружие! Старик и море. / Рассказы. М.: Худ. Лит.
12. Романчук, Л.А. *Природа в ранних рассказах Хемингуэя*. Available at: <<https://noblit.ru/node/1035>> [Accessed March 2015].

### **Nature and Landscape in Hemingway's Short Fiction**

Nature is one of the main themes of Hemingway's short stories. The role and influence of Nature in Hemingway's short fiction and its perception by the critics «é» widely discussed in the article. It is also described how the writer depicts landscapes and natural phenomena by putting colors and life into them.

### **Природа и пейзаж в маленькой прозе Э.Хемингуэя**

Природа – одна из преобладающих тем прозы Э. Хемингуэя. В статье обобщенно рассматривается роль и влияние природы в прозе писателя и ее восприятие со стороны критиков. Представляется также то, как писатель создает пейзажи, как он их окрашивает, и какой символический смысл получают естественные явления в прозе Хемингуэя.